

ԻՐԱՎՈՒՆՔԻ ՈՐՈՇԱԿԻՈՒԹՅԱՆ ՊԱՏՄԱՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ

Անի Սարգսյան

ԵՊՀ պետության և իրավունքի տեսության
ու պատմության ամբիոնի հայցորդ
ani25sargsyan1097@gmail.com,
ORCID - 0000-0002-5586-1129

Համառոտագիր: Սույն գիտական հոդվածի շրջանակներում հեղինակը բննարկել է «օրենքի որոշակիություն», «իրավունքի որոշակիություն», «իրավական որոշակիություն», «իրավունքի ձևական որոշակիություն», «օրենքի անորոշություն», «իրավական անորոշություն» եզրույթների իրավական բովանդակությունը: Վերլուծությունը կատարվել է մի շարք իրավաբան-գիտնականների և փոխտեսիների՝ Գ. Ֆ. Հեգելի և Ի. Կանտի աշխատությունների համալիր ուսումնասիրության հիման վրա:

Հեղինակն անդրադարձ է կատարել իրավունքի որոշակիության և անորոշության, իրավունքի որոշակիության և իրավաստեղծ գործունեության, ինչպես նաև իրավունքի այլ սկզբունքների հետ հարաբերակցության խնդրին:

Հեղինակը եկել է այն եզրահանգման, որ իրավունքի որոշակիությունը.

- իրավունքի սկզբունք է,
- իրավաստեղծագործության անբաժանելի մաս է,
- կայուն օրենսդրության ձևավորմանն ուղղված գործընթաց է,
- իրավակիրառ գործունեության պատշաճ իրականացման միջոց է,
- մարդու իրավունքների և պարտականությունների պահպանմանն ուղղված երաշխիք է,

• դատական ակտերի վերանայմանը, օրինական ուժի մեջ մտնելուն, պարտադիր կատարմանը, դատական պրակտիկայի միասնականության և կայունության ապահովմանն ուղղված կանոնակարգ է:

Ընդ որում, իրավունքի զարգացման պայմաններում իրավունքի որոշակիության սկզբունքը պետք է դիտարկել ոչ թե որպես իրավունքի գերակայության սկզբունքի բաղադրիչ, այլ որպես իրավունքի ինքնուրույն, հիմնարար սկզբունք: Իրավաստեղծագործության և իրավունքի որոշակիության փոխգործակցությունը հեղինակը դիտարկել է երկու տեսանկյունից: Առաջին դեպքում իրավաստեղծագործությունն իրականացվում է այնպես, որ արդյունքում ձևավորվող իրավական ակտերը համապատասխանեն իրավունքի որոշակիության սկզբունքին: Երկրորդ դեպքում արդեն առկա իրավական ակտերը «ենթարկվում են» որոշակիացման. վերացվում են երկիմաստությունները, հստակեցվում են դրույթները և այլն:

Հեղինակը եզրակացրել է, որ իրավունքի որոշակիությունը, ըստ գործողության ձևի, լինում է ստատիկ՝ որպես սկզբունք, որի կանոններին համապատասխանեցվում են իրավական ակտերը ձևավորման փուլում, և դինամիկ՝ որպես գործընթաց, որի արդյունքում հաղթահարվում են իրավական ակտերում առկա երկիմաստությունները, անհստակությունները: Ի ամփոփումն՝ հեղինակը գտել է, որ կայուն օրենսդրության ձևավորման գործում իրավունքի որոշակիության սկզբունքը հանդես է գալիս որպես օրենսդրության «ձկունության» չափորոշիչ:

Բանալի բառեր - իրավունքի որոշակիություն; իրավունքի ձևական որոշակիություն; իրավական անորոշություն; կայուն օրենսդրության ձևավորում; իրավաստեղծագործության և իրավունքի որոշակիության փոխգործակցություն; օրենսդրության «ձկունության» չափորոշիչ; երկիմաստությունների և անհստակությունների հաղթահարում

1. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Սույն գիտական աշխատանքը նվիրված է իրավունքի որոշակիության պատմափիլիսոփայական ասպեկտների ուսումնասիրությանը և վերլուծությանը: Տեսական գրականությունում չկա հստակ մոտեցում իրավունքի որոշակիության սկզբունքի դերի և նշանակության, իրավունքի որոշակիության և անորոշության, իրավունքի որոշակիության և իրավաստեղծ գործունեության հարաբերակցության, ինչպես նաև իրավունքի այլ սկզբունքների հետ հարաբերակցության վերաբերյալ:

Հեղինակը, ուսումնասիրելով մի շարք իրավաբան գիտնականների և փիլիսոփաների աշխատությունները, ընդհանրացնելով համակարգային վերլուծության արդյունքները, բացահայտել է «օրենքի որոշակիություն», «իրավունքի որոշակիություն», «իրավական որոշակիություն», «իրավունքի ձևական որոշակիություն», «օրենքի անորոշություն», «իրավական անորոշություն» եզրույթների իրավական բովանդակությունը և գործառնության դերակատարությունը հասարակական հարաբերությունների զարգացմանը զուգահեռ իրավունքի կայուն զարգացումն ապահովելու շրջանակներում: Աշխատանքն իրականացվել է համընդհանուր՝ պատմական, համատեսական՝ ինդուկցիայի, դեդուկցիայի, վերլուծության և վերացարկման, ինչպես նաև մասնագիտական՝ համակարգակառուցվածքային և համեմատական-իրավական մեթոդների կիրառմամբ:

Իրավունքի որոշակիությունը իրավունքի գերակայության հիմքում ընկած ընդհանուր իրավունքի հիմնական սկզբունք է: Տեսական գրականությունում «օրենքի որոշակիություն», «իրավունքի որոշակիություն», «իրավական որոշակիություն», «իրավունքի ձևական որոշակիություն», «օրենքի անորոշություն», «իրավական անորոշություն» հասկացությունները ներկայացվում են տարբեր, երբեմն միմյանց հակասող բովանդակությամբ: Եթե անդրադառնանք առհասարակ «որոշակիություն» հասկացության փիլիսոփայական կողմերին, ապա չենք կարող չհիշատակել գերմանացի մեծ փիլիսոփա Գ. Ֆ. Հեգելին, ով գիտական շրջանառության մեջ դրեց չափման հայեցակարգը՝ որպես առարկայի քանակական և որակական որոշակիության միասնություն և բնական հարաբերություն:

«Տրամաբանության գիտություն» աշխատությունում Գ. Ֆ. Հեգելը ելնում էր որոշակիության գոյաբանական բնույթից՝ համարելով, որ վերջինիս հիմքը դիալեկտիկական ժխտումն է: Մենք սկսում ենք անորոշությունից և պատկերացնում ենք վերացական, անբովանդակ լինելն ընդհանրապես՝ մաքուր վերացականություն, որը, հետևաբար, նույնական է իր հակառակին, նաև զուրկ սահմանումներից՝ «ոչինչ»: Կեցության անորոշության հաղթահարումն իրականացվում է դրա ձևավորման գործընթացում, որը թեզիսի (կեցության) և հակաթեզիսի (ոչինչի) միջև սինթեզն է: Այսպիսով, որոշակի էակը դառնում է վերջնական ձևավորված՝ կոնկրետ, առկա և օբյեկտիվացված «այստեղ և հիմա»¹: Միևնույն ժամանակ, «Ոգու ֆենոմենոլոգիան» աշխատության ներածությունում Հեգելն առաջարկում է որոշակիության այլ՝ իմացաբանական (ձանաչողական) ըմբռնում՝ որպես դատողության առարկայի վերաբերյալ գիտելիքների ամբողջականություն և խորություն. «Այս դիալեկտիկական շարժումը, որն իրականացվում է գիտակցության կողմից ինքնին և՛ իր գիտելիքի, և՛ իր օբյեկտի նկատմամբ, քանի որ դրա համար դրանից բխում է նոր ճշմարիտ օբյեկտ, որը և, փաստացի, կոչվում է փորձ... Մենք տեսնում ենք, որ գիտակցությունն այժմ ունի երկու օբյեկտ. առաջինը «ինքնին»-ն է, երկրորդը՝ դրա գոյությունը գիտակցության համար... Փորձը, որ գիտակցությունն ինքն է անում իր նկատմամբ, իր հայեցողությամբ կարող է ամբողջությամբ ընդգրկել գիտակցության ողջ համակարգը կամ ոգու ճշմարտության ողջ թագավորությունը, այնպես, որ ճշմարտության այս

¹ Տե՛ս Гегель Г.Ф., Наука логики. - СПб., 1997. - С. 57–61:

պահերը դրսևորվեն յուրահատուկ որոշակիության մեջ ոչ թե որպես վերացական, մաքուր պահեր, այլ որպես... գիտակցության ձևեր»¹:

Գալիլիլովան Հեգելի փիլիսոփայության ուսումնասիրության արդյունքում նշել է, որ իրավունքում «որոշակիություն» տերմինի գոյաբանական և իմացաբանական ասպեկտների համադրությունը շատ հաջող ցույց է տալիս իրավաբանական իմաստի ձևավորման առանձնահատկությունը, մեկնաբանության և ճշգրտման սուբյեկտիվ-օբյեկտիվ բնույթը, քանի որ ճանաչողության առարկայի բովանդակության վերաբերյալ մեր գիտելիքները (օրինակ՝ օրենսդրական նորմի իմաստը), գտնվելով օրենսդրի սկզբնական կամքի տարածության մեջ, պարզաբանվում ու զարգանում են և այդ կամքին տալիս են իմաստային որոշակիության բարձր աստիճան՝ հաշվի առնելով օրենսդրական նորմի իրագործման ժամանակակից առանձնահատկությունները²:

Հեգելը նաև նշում էր, որ. «Մասնավոր իրավունքում այսպես կոչված կատարելությունը մշտական մոտարկում է»³: Մասնավոր իրավունքի կարգավորման հարաբերական որոշակիության այս մոտեցումը բխում է «թույլատրվում է այն ամենը, ինչ ուղղակիորեն արգելված չէ օրենքով»: Այստեղից էլ՝ մասնավոր իրավունքում իրավական կարգավորման դիսպոզիտիվ մեթոդի գերակայությունը:

Անհատական գիտակցության և պետական կառավարման համընթաց փոխգործակցության և զարգացման տեսանկյունից հետաքրքիր են Ի. Կանտի վերլուծությունները, որոնց համաձայն՝ մարդկության պատմական զարգացման նվիրական նպատակին մոտենալուն պետք է նպաստի մարդկանց լուսավորությունը, որի հետ Կանտը կապեց կրոնական և այլ խորը արմատացած մոլորությունների հաղթահարումը: Այն կարող է ազդել ոչ միայն անհատների անհատական գիտակցության, մտքերի և գործողությունների, այլև պետական կառավարման ողջ համակարգի, պետական որոշումների կայացման և իրականացման հիմքում ընկած սկզբունքների վրա: Ժողովրդի նպատակաուղղված, կազմակերպված լուսավորությունը հասարակության առաջադիմական զարգացման հիմքն է: Նա այս գործընթացում որպես կարևոր կետ էր տեսնում պատմության իմաստավորումը ոչ թե որպես էմպիրիկ գիտություն, որը նկարագրում է բազմաթիվ պատահական փաստեր և իրադարձություններ, այլ որպես բնության կողմից կանխորոշված նպատակին՝ համաշխարհային քաղաքացիական պետություն-կարգավիճակին, մարդկանց բնական մոտեցման հասկացությունը⁴: Ըստ էության, խոսքը մարդկության սոցիալ-իրավական առաջընթացի փիլիսոփայական և պատմական տեսության մշակման մասին է, որը պետք է բացատրի ոչ միայն անցյալը, այլ նաև ապագան, դառնա «Արիստոփանի թելը»՝ մարդկանց ցույց տալով սոցիալական զարգացման, կատարյալ սոցիալական կարգին հասնելու ուղին՝ դրանով իսկ նպաստելով «բնության գաղտնի ծրագրի» իրականացմանը:

Որոշ հեղինակների պնդմամբ՝ իրավունքի որոշակիությունը և իրավական անորոշությունը փոխկապակցված, հակադիր իրավական հասկացություններ են:

¹ St'u Гегель Г.Ф., Феноменология духа. - СПб., 1999. - С. 48–50.

² St'u Гаврилова Ю.А., Преодоление неопределенности смысла права в процессе толкования по объему. - Определенность и неопределенность права как парные категории: проблемы теории и практики: Материалы XII международной научно-практической конференции. В 3-х частях. — М., РГУП, 2018. Ч. I. — с. 177 – 182:

³ St'u Гегель Г.Ф., Философия права. - М., 1990. - С. 254:

⁴ St'u Кант И., Идея всеобщей истории во всемирно-гражданском плане. - // Кант И. Соч.: в 8 т. М., 1994. Т. 8. - С. 26–28:

Չնայած միմյանց միջև առկա հակասությանը՝ դրանք անհրաժեշտորեն բնորոշ են իրավական կարգավորմանը մարդկային զարգացման բոլոր փուլերում¹:

Օ. Է. Լեյստը նշում է, որ իրավունքի ձևական որոշակիություն ասելով պետք է հասկանալ իրավական հետևանքներ առաջացնող հանգամանքների հստակ նշանակումը, այդ հետևանքների, իրավահարաբերությունների մասնակիցներին բնորոշ որակների նշանակումը և այլն²: Ընդունված է իրավական նորմերը և դրանց բաղադրատարրերը, ըստ որոշակիության աստիճանի, դասակարգել բացարձակ որոշակի (այլ կերպ՝ իմպերատիվ) և հարաբերական որոշակի (այլ կերպ՝ դիսպոզիտիվ) նորմերի: Վերջիններս իրագործման ընթացքում պահանջում կամ թույլատրում են իրավակիրառ մարմինների կամ իրավահարաբերությունների մասնակիցների վերանայումը: Լեյստն ուշադրությունը հրավիրում է այն հանգամանքի վրա, որ նորմատիվիզմի ավանդույթն է իրավունքի նորմերին վերացական (աբստրակտ) բնույթ հաղորդելը: Վերացականությունը նորմին հաղորդում է համընդհանուր բնույթ, որն ազատում է նորմն ավելորդ կազուսից և թույլ է տալիս մոտ փաստական հանգամանքների առկայության դեպքում բազմաթիվ անգամ կիրառել իրավական նորմերը: Միևնույն ժամանակ, չափազանց շատ վերացականությունը կարող է վնաս հասցնել որոշակիությանը և ստեղծել իրավիճակ, որտեղ նորմերը պարզ և հստակ չեն: Լեյստն իր աշխատությունում նշում է նաև «ձևական անորոշության» մասին, որն առաջանում է այնպիսի իրավիճակում, երբ պետությունն ունակ չէ արդարացնելու իրավական նորմից բխող սպասելիքները: Այսինքն, ձևականորեն անորոշ նորմը չի կարող առաջացնել այնպիսի իրավական հետևանքներ, որոնք ակնկալում են իրավահարաբերության մասնակիցները:

Ա. Ի. Սիդորենկոն իր աշխատությունում հանգել է այն եզրակացության, որ իրավունքի ձևական որոշակիության հատկությունը նշանակում է իրավունքի բովանդակային բաղադրատարրի սանկցավորումը վերջինիս որոշակի ձև հաղորդելու ճանապարհով: Այստեղից իրավական կարգավորման բովանդակային բաղադրատարրի որոշակիության պահանջը կարելի է ներկայացնել որպես «իրավունքի որոշակիություն»: Նշված բաղադրատարրերը, իրենց հերթին, ամբողջականության մեջ ձևավորում են այնպիսի իրավական կարգավորում, որը հակասական չէ և հստակ է, իսկ իրավունքի այդպիսի նորմերով կարգավորված իրավահարաբերությունների մասնակիցներն իրենց վրա զգում են իրավունքի որոշակիության ազդեցությունը, ինչն ապահովում է իրավակիրառ գործունեության ամբողջական և բավարար գործընթացը³:

Տ. Ն. Նեշատանան, դիտարկելով իրավունքի որոշակիությունը համընդհանուր իրավական մասշտաբում, նշում է, որ համաձայն այդ սկզբունքի՝ յուրաքանչյուր նորմատիվ ակտ, այդ թվում՝ դատական ակտերը, իրավունքի աղբյուր են միայն այն դեպքում, երբ կրում են որոշակի բնույթ, արդյունավետորեն կարգավորում են իրավահարաբերությունները և պարունակում են իրավական կարգավորման համաչափ միջոցառումներ: Վերոնշյալ բաղադրատարրերից յուրաքանչյուրի բացակայության դեպքում միջազգային եվրոպական դատարանները կարող են թե՛ օրենքը, թե՛ պայմանագիրը, թե՛ դատական ակտը ճանաչել իրավունքի գերակայության սկզբունքին չհամապատասխանող⁴: Իրավունքի որոշակիության գաղափարի հիմքերի հասկացության նկատմամբ նման մոտեցումը կանխորոշում է դրա բովանդա-

¹ St'u Сидоренко А.И., Принцип правовой определенности в судебной практике: имплементация решений Европейского Суда по правам человека. - диссертация ... кандидата юридических наук : 12.00.01. - Пермь, 2016. - էջ 16:

² St'u Лейст О.Э., Сущность права. Проблемы теории и философии права: учебное пособие / О. Э. Лейст. - М.: Зерцало-М, 2011. - 352 էջ:

³ St'u Сидоренко А.И., նշվ. աշխատությունը, էջ 18:

⁴ St'u Нешатаева Т.Н. Уроки судебной практики о правах человека: европейский и российский опыт. - М.: Городец, 2007. - էջ 67-68:

կության չափազանց լայն մեկնաբանումը: Որպես դրա հետևանք՝ ժամանակակից իրավաբանական գրականությունում իրավունքի որոշակիության սկզբունքը մեկնաբանվում է որպես համընդհանուր իրավական սկզբունք, որը տարածում է իր ազդեցությունն իրավունքի տարբեր ճյուղերի նորմերով կարգավորված բոլոր հասարակական հարաբերությունների վրա: Ա. Ռ. Սուլթանովի կարծիքով՝ իրավունքի որոշակիությունը իրավունքի հիմնարար սկզբունքներից մեկն է¹:

2. Իրավունքի որոշակիության և իրավական անորոշության հարաբերակցությունը

Սույն գիտական հոդվածի շրջանակներում հարկ ենք համարում անդրադառնալ իրավական անորոշությանը, որը ոչ միանշանակ է ընկալվում տեսական գրականությունում: Որոշ հեղինակների կողմից այն ընդունվում է որպես, այսպես կոչված, վնասակար երևույթ, որը ենթակա է վերացման իրավունքի որոշակիության կիրառման կառուցակարգերով, իսկ ոմանց կարծիքով՝ իրավական անորոշությունը կարևոր դեր ունի իրավունքի որոշակիության սկզբունքի արդյունավետ կիրառման համար:

Այսպես, Յորգ Կամմերհոֆերի կարծիքով՝ անորոշությունը թույլ է տալիս լուծել խնդիրները խիստ կանոնակարգման շրջանակներից դուրս, հատկապես միջազգային իրավունքի ոլորտում²: Ըստ էության, տեսաբաններն այն կարծիքին են, որ անորոշությունը հնարավորություն է տալիս իրավահարաբերության մասնակիցներին իրավական կարգավորման շրջանակներում ինքնուրույն ընտրել և կիրառել այն մեթոդները, որոնք նպատակահարմար կլինի խնդիրն արդյունավետ լուծելու համար՝ անկախ այն հանգամանքից, թե տվյալ մեթոդը կունենա ոչ իրավական, քաղաքական բնույթ, թե ոչ: Սակայն այն դեպքում, երբ ձևավորվում է որոշակի իրավական նորմ, կամ հաստատվում է կայուն դատական պրակտիկա, նման ազատությունը դադարում է գործել:

Ե. Վ. Բոգդանովան նշում է, որ անորոշությունը համարվում է պայմանագրային կարգավորման բաղադրատարր: Անորոշության հատկությունը հաճախ կիրառվում է տարբեր տեսակի պայմանագրեր կնքելիս, քանի որ դա այն գործիքն է, որի միջոցով ձեռք են բերվում իրավական կարգավորման հստակությունը և ճկունությունը³:

Իրավական անորոշության վերաբերյալ բավականին լայն հետազոտություններ է իրականացրել Ն. Ա. Վլասենկոն: Նրա կարծիքով՝ իրավական անորոշությունն իր արտահայտությունն է գտնում իրավունքի գլխավոր տարրում՝ իրավական նորմերում: Իրավական կանոններին բնորոշ է վերացական (աբստրակտ) բնույթը՝ հիմնված ընդհանրացումների վրա, ինչը համարվում է իրավական կարգավորման գլխավոր պայմանը: Բացի դրանից, նորմի բաղադրատարրերի (դիսպոզիցիաներ, սանկցիաներ) անորոշությունը պայմանավորում է իրավակիրառ տեսանկյունից խնդրի լուծման ավելի նպատակահարմար և ընդունելի տարբերակ ընտրելու ազատությունը: Այլ խոսքով, իրավական անորոշությունը թույլ է տալիս հաշվի առնել հասարակական հարաբերությունների զարգացման հատկությունները և դինամիկան⁴:

¹ St'u Султанов А.Р. Правовая определенность и судебное нормотворчество // Законодательство и экономика. – 2007, № 11. – էջ 39-45:

² St'u Kammerhofer J. Uncertainty in international law. A Kelsenian perspective, New York, էջ 6:

³ St'u Богданова Е. В. Категории «определенность» и «неопределенность» как элементы договорного регулирования общественных отношений. – Законодательство. Экономика. – 2012. № 4, էջ 21:

⁴ St'u Власенко Н.А. Неопределенность в праве: природа и формы выражения. – Журнал российского права. – 2013. № 2. – էջ 32 – 44:

Կարևոր է հաշվի առնել նաև այն հանգամանքը, թե ինչ նկատի ունենք վերացականություն, անորոշություն ասելով: Այն կախված է, առաջին հերթին, հասարակական հարաբերությունների ոլորտից, մասշտաբից, երկրորդ, այն հանգամանքից, թե որքանով են իրավունքով կարգավորման փաստացի հանգամանքները ենթարկվում ձևակերպման և հստակ նկարագրման: Ակնհայտ է, որ որքան լայն է իրավունքի նորմով կարգավորվող հարաբերությունների շրջանակը, այնքան ավելի ընդհանուր, վերացական և անորոշ է դառնում նրա բովանդակությունը: Նվազ որոշակի բովանդակություն ունեցող իրավական նորմերը, որոնք կարգավորում են փաստացի հարաբերությունների տեսակը, հաճախ անվանում են աբստրակտ:

Վկասենկոն, կախված նորմի հիպոթեզի բովանդակության որոշակիությունից, առանձնացնում է նորմի հետևյալ տեսակները՝ **որոշակի և հարաբերական-որոշակի**: Նույն չափանիշով ներկայացրել է նաև իրավական նորմի դիսպոզիցիայի տեսակները՝ **բացարձակ-որոշակի**, որի դեպքում իրավակիրառ մարմինների կողմից նորմի վերանայում չի պահանջվում, **և հարաբերական-որոշակի**, որն էլ իր հերթին բաժանվում է 3 տեսակի՝ **իրավիճակային, այլընտրանքային և ֆակուլտատիվ**: Հեղինակի կարծիքով՝ վերջիններիս որոշակիացումն արտահայտվում է իրենց կիրառման ժամանակ, երբ առանձին հարցերի վերաբերյալ կանխամտածված սահմանվում է հայեցողություն՝ նպատակ ունենալով ապահովել իրավունքի կիրառման ակտը հասարակական կյանքին համապատասխանեցումը: Այստեղից եզրակացնում ենք, որ իրավունքի սուբյեկտների և իրավակիրառողների գործողությունների այլընտրանքի նշանակումն արդեն իսկ սահմանում է որոշակիություն:

Ինչ վերաբերում է սանկցիայի որոշակիության աստիճանին, հեղինակն առանձնացնում է հետևյալ տեսակները՝ **բացարձակ-որոշակի, հարաբերական-որոշակի և այլընտրանքային**: Այլընտրանքային սանկցիաները հնարավորություն են տալիս ընտրություն կատարել պետական հարկադրանքի միջոցների միջև: Տվյալ պարագայում գործում է «կամ-կամ» սկզբունքը, ինչն էլ հենց հիմք է տալիս հեղինակին այն ներկայացնելու որպես անորոշության արտահայտման ձև:

Իրավական անորոշությունը հատկապես կարևոր դեր ունի դատական համակարգում: Իրավական նորմերում տեղ գտած տերմինները մեկնաբանման անհրաժեշտություն են ունենում, ինչն էլ իրականացնում են դատավորները: Նման տերմինների մեկնաբանումը գործընթաց է, որը նպատակ է հետապնդում փոխարինել տերմինները ավելի հստակ ձևակերպված, շարադրված հասկացություններով, որոնք ընդգծում են երևույթների և առարկաների իրավական նշանակությունը: Այդ գործընթացի հիմքում ընկած է իրավական անորոշությունից իրավունքի որոշակիության անցնելու օրինաչափությունը, ինչն իրավակիրառության կարևոր հատկություններից է:

Ղատական համակարգում իրավունքի անորոշությունը որոշակիության վերածելու գործում կարևոր դեր ունի միջազգային ղատական ատյանների կայացրած ղատական ակտերում արտահայտված իրավական դիրքորոշումների իմպլեմենտացումը ազգային ղատարանների կողմից կայացված ղատական ակտերում, ինչի շնորհիվ հասարակության համար ավելի հասանելի և հասկանալի են դառնում միջազգային ղատարանների ղատական ակտերը և դրանցում առկա իրավական դիրքորոշումները:

Ինչ վերաբերում է պայմանագրային հարաբերություններին, այստեղ որոշ տեսաբանների մոտ առկա է այն կարծիքը, որ սույն հարաբերություններում իրավական անորոշությունը կարևոր դերակատարում ունի, քանի որ այն կիրառվում է տարբեր տեսակի պայմանագրեր կնքելիս: Իրավական կարգավորման մեջ կիրառելով դիսպոզիտիվ նորմեր՝ օրենսդիրը գիտակցաբար արտահայտում է իր կամքը ոչ ամբողջությամբ, վերջնականապես չի ձևավորում վարքագծի կանոնները, ինչպես որ անում է իմպերատիվ նորմերի դեպքում՝ այդ գործը թողնելով պայմանագրի սուբյեկտներին: Մեր կարծիքով՝ նման պարագայում իրավունքի անորոշության

հետ գործ կունենանք այն դեպքում, երբ օրենսդիրը չնախատեսի իրավահարաբերության կարգավորման այլ ձևեր՝ չնայած դրա անհրաժեշտության առկայությանը, մինչդեռ իրավահարաբերության սուբյեկտներին հարաբերությունների ինքնուրույն կարգավորման հայեցողության իրավունք նախատեսելու դեպքում տվյալ սուբյեկտներին հնարավորություն է ընձեռնվում իրենց համար նախընտրելի և ընդունելի ձևով իրականացնել իրավունքների և պարտականությունների որոշակիացման գործընթացը:

Իրավական անորոշության տեսանկյունից կարևոր խնդիր է նաև նորմերի միջև հակասությունը: Հակասող իրավական նորմերը բարդացնում են իրավակիրառ գործընթացը, նվազեցնում են իրավական ազդեցությունը: Նորմերի հակասության դեպքում իրավակիրառողը հայտնվում է անորոշ վիճակում, երբ անհասկանալի է, թե որ նորմին պետք է տրվի նախապատվությունը: Վլասենկոն, ելնելով նորմերի կոլիզիայի առաջացման պատճառներից և այլ հատկություններից, տարանջատում է նորմերի հակասության հետևյալ տեսակները՝ *ժամանակավոր, տարածական, հիերարխիկ* (տարբեր իրավաբանական ուժ ունեցող նորմերի միջև հակասությունը) և *բովանդակային*¹: Ավելի բարձր աստիճանի է հասնում իրավական անորոշությունը, երբ միևնույն ժամանակ առկա են միանգամից երկու և ավելի կոլիզիոն իրավիճակներ:

Չպետք է շփոթել կոլիզիաների հետևանքով առաջացած իրավական անորոշությունը իրավունքի նորմերի մրցակցության հետ (ընդհանուր ու հատուկ նորմերի և այլն), ինչը ոչ թե իրավունքի անհամապատասխանություն է, այլ իրավական կարգավորման տեխնիկական-իրավաբանական միջոց:

Իրավական նորմերի անհավասարակշռության տեսակ է իրավունքի բացը՝ իրավունքի նորմի բացակայությունը, մինչդեռ այն պետք է լինի՝ ելնելով իրավական կարգավորման առարկայի, նրա ծավալի և բովանդակության տեսանկյունից: Այստեղ իրավակիրառողը նույնպես գտնվում է անորոշության իրավիճակում: Բացերը լրացվում են իրավաստեղծագործությամբ: Միևնույն ժամանակ, դատարանը չի կարող բացի հիմքով մերժել սուբյեկտիվ իրավունքի պաշտպանությունը: Տվյալ պարագայում դատավորը դիմում է օրենքի, իրավունքի անալոգիաների օգնությանը, ինչը թույլ է տալիս գերծ մնալ կամայականության դրսևորումից և, մնալով օրենքի շրջանակներում, կայացնել դատական ակտ:

Օրենսդրական անորոշության առաջացման հիմքերից են նաև տրամաբանական-լեզվական շեղումները, իրավական նորմերի ձևավորման և արտահայտման աղավաղումները, որոնք աներկբայորեն նվազեցնում են իրավունքի կարգավորիչ հատկությունները, բարդացնում են նրա դրույթների մեկնաբանումը և խոչընդոտում վերջիններիս արդյունավետ իրագործումը:

Վլասենկոն իր աշխատություններում կարևորում է «իրավունքի ձևի որոշակիությունը»: Ըստ էության, հեղինակը նկատի ունի նորմատիվ իրավական ակտերի հստակությունը տրամաբանական-լեզվաբանական և գրաֆիկական չափանիշների պահպանման տեսանկյունից, որից ելնելով՝ առանձնացնում է իրավական անորոշության *տրամաբանական, լեզվական և գրաֆիկական* տեսակները: Ընդ որում, անկախ այդ տեսակներից՝ անորոշությունը բացասաբար է ազդում իրավունքի համակարգի վրա, ինչի հետևանքով իրավաստեղծ մարմինների կողմից առաջադրված գաղափարները մնում են թղթի վրա և դառնում անիրագործելի: Լեզվական անորոշությունն արտահայտվում է նորմատիվ նախադասություններ կազմելու չափորոշիչներից շեղվելու, իրավաբանական տերմինաբանության, բառակապակցությունների սխալ կիրառման դեպքում: Տրամաբանական անորոշության դեպքում իրավական փաստաթղթեր պատրաստելիս և ձևակերպելիս չեն պահպանվում ձևական տրամաբանության կանոնները: Բանն այն է, որ տրամաբանությունն ապահովում է

¹ Տե՛ս Власенко Н.А., նշվ. աշխ., էջ 39:

նորմատիվ իրավական ակտի իմաստային, հետևողական կառուցվածքը, իմաստավորում է այն և ապահովում է վերջինիս կայուն և արդյունավետ իրագործումը: Գրաֆիկական անորոշությունը նորմատիվ իրավական նյութի կազմակերպման կանոնների և օրինաչափությունների խախտման հետևանքն է:

Չնայած Վլասենկոյի կողմից նման տեսակների առանձնացմանը՝ մեր կարծիքով, լեզվական, տրամաբանական և գրաֆիկական անորոշությունները փոխկապակցված են, և, ըստ էության, նշված տեսակներից մեկի առկայությունը հանգեցնում է նաև մյուսի առաջացմանը: Նման անորոշության առաջացման համար հիմք է հանդիսանում իրավաբանական տեխնիկայի կանոնների չափաչափումը և/կամ սխալ կիրառումը: Ընդ որում, անորոշության իրավիճակ կարող է լինել ինչպես նորմատիվ իրավական ակտերում, այլ նաև դատական ակտերում, ինչը պատճառ է դառնում դատական ակտի չկատարման:

Ա. Ս. Սմբատյանը նշում է, որ իրավապահայան մարմինների կողմից իրավական կարգավորման ոլորտում անորոշությունների և «մութ անկյունների» վերհանումը՝ դրանց հետագա պարզաբանմամբ և բովանդակության լրացմամբ, դատական գործառնության բաղկացուցիչ մասն է, որն ուղղված է ոչ միայն կոնկրետ վեճի կարգավորմանը, այլ նաև իրավունքի զարգացմանը¹:

Այլ կերպ է ընկալվում իրավական անորոշությունն ընդհանուր իրավունքի երկրներում: Ինչպես հայտնի է, այստեղ իրավունքի հիմնական աղբյուրը դատական նախադեպերն են, որի հիմքով էլ իրավական անորոշությունն ընկալվում է որպես որևէ խնդրի վերաբերյալ դատական նախադեպի բացակայություն: Որոշ հեղինակների կարծիքով էլ՝ իրավական անորոշությունը կապված է դատական ակտը կանխատեսելու անհնարինության հետ²:

Ընդհանուր առմամբ, իրավական անորոշություն ասելով հասկանում ենք իրավունքի սուբյեկտի կողմից գործող իրավունքի շրջանակներում իր իրավունքների, պարտականությունների, արգելքների և դրանց հետևանքների իրագործման ծավալի և պայմանների սահմանման հնարավորության բացակայությունը, ինչպես նաև հակասական և փոփոխվող իրավակիրառ պրակտիկայի արդյունքում առաջացած անվստահությունը, անկայուն իրավիճակը:

Տեսաբանների մոտ առկա է այն կարծիքը, որ իրավունքի որոշակիության բացակայությունը վկայում է իրավունքի պակաս կամ լրիվ անկատար լինելու մասին: Իրավունքի որոշակիությունը կարևոր նշանակություն ունի պետության համար, այն երաշխիք է յուրաքանչյուր քաղաքացու իրավունքների ու պարտականությունների համար, հետևաբար, իրավունքի որոշակիությունը իրավունքի անբաժանելի հատկությունն է³:

Տեսական գրականությունում հակասական կարծիք է ձևավորված իրավունքի որոշակիության վերաբերյալ: Մասնավորապես, հիմնականում քննարկվում է իրավունքի որոշակիության՝ իրավունքի հիմնարար սկզբունք լինելու և դատական պրակտիկայի կայունության պահպանման միջոց հանդիսանալու հանգամանքը: Իհարկե, բնավ սխալ չենք համարում նման մոտեցումը, սակայն կարծում ենք, որ իրավունքի որոշակիության նշանակությունը և կիրառման շրջանակը առավել լայն են: Այսպես, գտնում ենք, որ իրավունքի որոշակիությունը.

- իրավունքի սկզբունք է,

¹ Տե՛ս **Смбатян А.С.** Решения органов международного правосудия в системе международного публичного права. - М.: Статут, 2012. - էջ 143:

² Տե՛ս **A. D'Amato** Legal Uncertainty. - California Law Review Vol. 71 Issue 1. - California, 1983. - 55 էջ:

³ Տե՛ս **Ahmad Muliadi**, Applying Principles of Legal Certainty and Equal in the Implementation of Investment in Indonesia, - European Research Studies Journal, Volume XX, Issue 4A, 2017, - էջ 133-150:

- իրավաստեղծագործության անբաժանելի մաս է,
- կայուն օրենսդրության ձևավորմանն ուղղված գործընթաց է,
- իրավակիրառ գործունեության պատշաճ իրականացման միջոց է,
- մարդու իրավունքների և պարտականությունների պահպանմանն ուղղված երաշխիք է,

- դատական ակտերի վերանայմանը, օրինական ուժի մեջ մտնելուն, պարտադիր կատարմանը, դատական պրակտիկայի միասնականության և կայունության ապահովմանն ուղղված կանոնակարգ է:

Իրավունքի սկզբունքներն օբյեկտիվ օրինաչափություններն իրավաբանորեն արտացոլող հասարակական կյանքի այն հիմնական գաղափարներն ու ելակետային, դեկլարար դրույթներն են, որոնք որոշում են իրավունքի ձևավորման, զարգացման ու գործողության (կիրառման) գործընթացը, դրա բովանդակության հիմնական հարցերը, սոցիալական էությունը¹: Իրավունքի ընդհանուր սկզբունքներ են համարվում այն հիմնադրույթները, որոնք գործում են իրավունքի բոլոր ոլորտներում, նույն իրավաբանական ուժով գործում են իրավունքի բոլոր ճյուղերում՝ անկախ դրանց կողմից կարգավորվող հասարակական հարաբերությունների բնույթից և առանձնահատկությունից, սահմանում են ամբողջությամբ վերցրած իրավունքի առավել էական գծերը, արտահայտում են դրա՝ որպես ողջ հասարակական հարաբերությունների նորմատիվ կարգավորիչի սոցիալական առաքելությունը: Ըստ հեղինակի՝ իրավունքի ընդհանուր, համաիրավական սկզբունքների շարքին են դասվում սոցիալական ազատության, ժողովրդաիշխանության, իրավահավասարության, արդարության, մարդասիրության, իրավաբանական իրավունքների և պարտականությունների միասնության, իրավունքի գերակայության, իրավական օրինականության, հարկադրանքի և համոզման զուգակցման սկզբունքները:

Ջարմանալի չէ, որ վերոնշյալ և մի շարք այլ աղբյուրներում իրավունքի որոշակիության սկզբունքը բացակայում է իրավունքի համաիրավական սկզբունքների շարքից: Անգամ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից կայացված մի շարք դատական ակտերում արտահայտված է հետևյալ դիրքորոշումը, որ իրավունքի որոշակիությունը իրավունքի գերակայության սկզբունքի բաղկացուցիչ մասն է: Միանշանակ համաձայն ենք այն մտքի հետ, որ «իրավունքի որոշակիություն» հասկացությունը առաջ է եկել հենց իրավունքի գերակայության սկզբունքից: «Իրավունքն ստեղծում է հասարակությունը, իսկ օրենքը՝ պետությունը» բանաձևից բխում է իրավունքի գերակայությունը, իսկ որակյալ, մարդու շահերից, պահանջմունքներից բխող իրավական ակտերի ստեղծումը՝ իրավունքի որոշակիությունից: Մեր կարծիքով՝ ներկայումս իրավունքի զարգացման պայմաններում իրավունքի որոշակիության սկզբունքը պետք է դիտարկել ոչ թե որպես իրավունքի գերակայության սկզբունքի բաղադրիչ, այլ որպես իրավունքի ինքնուրույն, հիմնարար սկզբունք:

Ինչ վերաբերում է իրավաստեղծագործության և իրավունքի որոշակիության փոխգործակցությանը, այն կարելի է դիտարկել երկու տեսանկյունից: Առաջին դեպքում իրավաստեղծագործությունն իրականացվում է այնպես, որ արդյունքում ձևավորվող իրավական ակտերը համապատասխանեն իրավունքի որոշակիության սկզբունքին: Երկրորդ դեպքում արդեն առկա իրավական ակտերը «ենթարկվում են» որոշակիացման. վերացվում են երկիմաստությունները, հստակեցվում են դրույթները և այլն: Այստեղից եզրակացնում ենք, որ իրավունքի որոշակիությունը, ըստ գործողության ձևի, լինում է.

- ստատիկ՝ որպես սկզբունք, որի կանոններին համապատասխանեցվում են իրավական ակտերը ձևավորման փուլում,

¹ Տե՛ս Վաղարշյան Ա.Գ., Պետության և իրավունքի տեսություն-2: Դասախոսություն/Արթուր Վաղարշյան: ԵՊՀ. - Եր.: Հեղինակային հրատարակություն, 2011, – 448 էջ:

• դինամիկ՝ որպես գործընթաց, որի արդյունքում հաղթահարվում են իրավական ակտերում առկա երկինաստությունները, անհատականությունները:

Կայուն օրենսդրության ձևավորման գործում իրավունքի որոշակիության սկզբունքը հանդես է գալիս որպես օրենսդրության «ձկունության» չափորոշիչ: Այսպես, օրենսդրական փոփոխությունները պետք է լինեն նպատակային, ուղղված լինեն օրենքի բացերի վերացմանը, հասարակական հարաբերությունների կարգավորմանը, նոր իրավունքների և պարտականությունների ամրագրմանը: Նման փոփոխությունները պետք է իրականացվեն ժամանակին, մինչդեռ աննպատակ, անընդմեջ փոփոխությունները չեն կարող ապահովել արդյունավետ և կայուն օրենսդրության ձևավորում:

Իրավունքի որոշակիությունը, հանդիսանալով կայուն օրենսդրության, միասնական դատական պրակտիկայի ապահովման առանցքը, հիմք է ստեղծում հասարակության համար հստակ տեղյակ լինելու իր իրավունքների և պարտականությունների մասին, ընկալելու և իրացնելու դրանք, մինչդեռ անորոշությունների առկայության պարագայում իրավունքների և պարտականությունների իրացումը կդառնա անհնարին:

Իրավունքի որոշակիության սկզբունքից բխում է նաև միասնական դատական պրակտիկայի ձևավորումը, դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելու և վերանայման գործընթացի կարգավորումը (*res judicata*): Եվրոպական միության Արդարադատության դատարանը զարգացրել է նախադեպային իրավունքի երկու ուղղություն՝ կապված *res judicata*-ի և ազգային դատարանների դատական ակտերի վերջնական լինելու հետ: Առաջին ուղղությունը վերաբերում է այն վարչական ակտերի «վերաբացման» հնարավորությանը, որոնք ազգային դատական համակարգում դարձել էին վերջնական: Երկրորդ ուղղությունը վերաբերում է նույն հնարավորությանը, սակայն արդեն դատական ակտերի նկատմամբ: Չնայած երկու ուղղությունների միմյանց հետ փոխկապակցվածությանը՝ դրանք ունեն մի շարք առանձնահատկություններ, որոնք արտացոլում են վարչական և դատական ակտերի տարբերակումը¹:

Հարկ է նշել, որ որոշ հեղինակների շրջանում առկա է այն կարծիքը, որ իրավունքի որոշակիության և *res judicata*-ի սկզբունքները նույնական են, կրում են նույն բովանդակությունը, մինչդեռ առաջինն առավել լայն է և, ըստ էության, ընդգրկում է *res judicata*-ի սկզբունքը:

3. ԵՋՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, վերոգրյալ վերլուծությունների արդյունքում կարող ենք եզրակացնել, որ իրավունքի որոշակիությունը.

- իրավունքի սկզբունք է,
- իրավաստեղծագործության անբաժանելի մաս է,
- կայուն օրենսդրության ձևավորմանն ուղղված գործընթաց է,
- իրավակիրառ գործունեության պատշաճ իրականացման միջոց է,
- մարդու իրավունքների և պարտականությունների պահպանմանն ուղղված երաշխիք է,

• դատական ակտերի վերանայմանը, օրինական ուժի մեջ մտնելուն, պարտադիր կատարմանը, դատական պրակտիկայի միասնականության և կայունության ապահովմանն ուղղված կանոնակարգ է:

¹ St'u Xavier Groussot, Timo Minssen. - *Res Judicata in the Court of Justice Case-Law: Balancing Legal Certainty with Legality?* – Lund University, University of Copenhagen, 2007. - էջ 385 – 417:

Զնայած այն հանգամանքին, որ «իրավունքի որոշակիություն» հասկացությունը առաջ է եկել հենց իրավունքի գերակայության սկզբունքից, այնուամենայնիվ, մեր կարծիքով՝ ներկայումս իրավունքի զարգացման պայմաններում իրավունքի որոշակիության սկզբունքը պետք է դիտարկել ոչ թե որպես իրավունքի գերակայության սկզբունքի բաղադրիչ, այլ որպես իրավունքի ինքնուրույն, հիմնարար սկզբունք: Իրավական անորոշություն ասելով հասկանում ենք իրավունքի սուբյեկտի կողմից գործող իրավունքի շրջանակներում իր իրավունքների, պարտականությունների, արգելքների և դրանց հետևանքների իրագործման ծավալի և պայմանների սահմանման հնարավորության բացակայությունը, ինչպես նաև հակասական և փոփոխվող իրավակիրառ պրակտիկայի արդյունքում առաջացած անվստահությունը, անկայուն իրավիճակը: Իրավաստեղծագործության և իրավունքի որոշակիության փոխգործակցությունը կարելի է դիտարկել երկու տեսանկյունից: Առաջին դեպքում իրավաստեղծագործությունն իրականացվում է այնպես, որ արդյունքում ձևավորվող իրավական ակտերը համապատասխանեն իրավունքի որոշակիության սկզբունքին: Երկրորդ դեպքում, արդեն առկա իրավական ակտերը «ենթարկվում են» որոշակիացման. վերացվում են երկիմաստությունները, հստակեցվում են դրույթները և այլն: Այստեղից եզրակացնում ենք, որ իրավունքի որոշակիությունը, ըստ գործողության ձևի, լինում է.

- ստատիկ՝ որպես սկզբունք, որի կանոններին համապատասխանեցվում են իրավական ակտերը ձևավորման փուլում,
- դինամիկ՝ որպես գործընթաց, որի արդյունքում հաղթահարվում են իրավական ակտերում առկա երկիմաստությունները, անհստակությունները:

Բացի այդ, կայուն օրենսդրության ձևավորման գործում իրավունքի որոշակիության սկզբունքը հանդես է գալիս որպես օրենսդրության «ձկունության» չափորոշիչ: Իրավունքի որոշակիության սկզբունքից բխում են նաև միասնական դատական պրակտիկայի ձևավորումը, դատական ակտերի օրինական ուժի մեջ մտնելու և վերանայման գործընթացի կարգավորումը (*res judicata*):

ИСТОРИКО-ФИЛОСОФСКИЕ АСПЕКТЫ ОПРЕДЕЛЕННОСТИ ПРАВА

Ани Саргсян

*Соискатель кафедры теории и истории государства и права ЕГУ
ani25sargsyan1097@gmail.com,
ORCID - 0000-0002-5586-1129*

В рамках данной научной статьи автором рассмотрено правовое содержание терминов «определенность закона», «определенность права», «правовая определенность», «формальная определенность права», «неопределенность закона», «правовая неопределенность». Анализ проводился на основе комплексного изучения творчеств ряда юристов-ученых и философов Г.Ф. Гегеля и И. Канта.

Автор затронул проблему определенности и неопределенности права, определенности права и правотворческой деятельности, а также соотношения с другими принципами права.

Автор пришел к выводу, что определенность права - это.

- принцип права,
- неотъемлемая часть правового творчества,
- процесс, направленный на формирование стабильного законодательства,

- средство надлежащего осуществления правоохранительной деятельности,
- гарантия, направленная на защиту прав и обязанностей человека,
- положение, направленное на пересмотр судебных актов, вступление их в законную силу, обязательность исполнения, единообразие и стабильность судебной практики.

При этом, в условиях развития права принцип определенности права следует рассматривать не как составную часть принципа верховенства права, а как самостоятельный, основополагающий принцип права. Автор рассмотрел взаимодействие правотворчества и определенности права с двух позиций. В первом случае правотворчество осуществляется таким образом, чтобы формирующиеся правовые акты соответствовали принципу правовой определенности. Во втором случае определению «подвергаются» уже существующие правовые акты: устраняются неясности, уточняются положения и т.п.

Автор пришел к выводу, что определенность права по форме действия можно разделить на статический - как принцип, правилам которого соответствуют правовые акты на стадии формирования, и на динамичный - как процесс, в результате которого преодолеваются неясности и неопределенности в правовых актах. В заключение автор установил, что принцип определенности права является мерой «гибкости» законодательства при формировании стабильного законодательства.

Ключевые слова – *определенность права; формальная правовая определенность; правовая неопределенность; формирование устойчивого законодательства; взаимосвязь между правотворчеством и определенностью права; мера «гибкости» законодательства; преодоление двусмысленностей и неопределённостей*

HISTORICAL-PHILOSOPHICAL ASPECTS OF CERTAINTY OF LAW

Ani Sargsyan

*Applicant at the YSU Chair of Theory
and History of State and Law
ani25sargsyan1097@gmail.com,
ORCID - 0000-0002-5586-1129*

Within the framework of this scientific article, the author discussed the legal content of the terms “certainty of act”, “certainty of law”, “legal certainty”, “formal certainty of law”, “uncertainty of law”, “legal uncertainty”. The analysis was carried out on the basis of a comprehensive study of the works of a number of lawyer-scientists and philosophers G.F. Hegel and I. Kant.

The author touched upon the problem of certainty and uncertainty of law, certainty of law and law-making activity, as well as the relationship with other principles of law.

The author came to the conclusion that the certainty of law is.

- principle of law,
- an integral part of lawmaking process,
- a process directed to creating stable legislation,
- a means of proper implementation of law-enforcement activities,

- a guarantee directed to protecting human rights and obligations,
- a regulation directed to reviewing judicial acts, their entry into legal force, mandatory execution, uniformity and stability of judicial practice.

At the same time, in the conditions of development of law, the principle of certainty of law should be considered not as an integral part of the principle of the rule of law, but as an independent, fundamental principle of law. The author examined the interaction of lawmaking and the certainty of law from two positions. In the first case, the lawmaking process is carried out in such a way that the forming legal acts comply with the principle of legal certainty. In the second case, already existing legal acts are "subjected" to certainty: ambiguities are eliminated, provisions are clarified, etc.

The author came to the conclusion that the certainty of law in terms of the form of action can be divided into static - as a principle whose rules correspond to legal acts at the stage of formation, and dynamic - as a process as a result of which ambiguities and uncertainties in legal acts are overcome. In conclusion, the author established that the principle of certainty of law is a measure of the "flexibility" of legislation in the formation of stable legislation.

Key words – *certainty of law; formal certainty of law; legal uncertainty; development of sustainable legislation; correlation between lawmaking and certainty of law; measure of "flexibility" of legislation; overcoming ambiguities and uncertainties*